

բոսիսկը, փոթին եւ Բաթումը որոնք երկաթուղիներով կապուած ըլլալով երկրի ներքին դաւառներուն հետ, կը նպաստեն ներածութեան եւ արտածութեան: Իբրեւ նաւահանգիստներ դէշ չեն նաեւ Անապա, Տուապէ եւ Սոչի:

Կովկասի արեւելեան ափը, որ ամբողջապէս կը լուացուի Կասպից ծովու ջուրերով, ընդհանրապէս աւելի անյարմար է նաւահանգիստներու համար քան թէ Սեւ ծովու ափը: Շատ մը վայրերու մէջ ափերը ծանծաղ են եւ ծածկուած ժայռերով եւ վտանգաւոր խութերով, ինչ որ կը դժուարացնէ նաւերու ազատ երթեւեկը: Յարմար կայաններ են նախկին Պետրովսկի (Մաչախ Կալա) եւ աւելի հարաւ՝ Դերբենտի նաւահանգիստները: Սակայն ամենամեծը եւ ամէնէն յարմարն է Ալշերոնեան թերակղզիին վրայ Բազուի նաւահանգիստը, որ կարելի է ըսել միակն է ամբողջ Կասպից ծովու արեւմտեան ափին համար: Այստեղ բեռնաւորուած նաւերը անդադար կ'երթեւեկեն դէպի Պարսկաստան, Անդրկասպեան երկիրը, եւ մանաւանդ դէպի Վոլկա դետը, — դէպի Ռուսաստան:

ԱՅՐ. ԳԻՒԼՆԱՆԴԱՆԵԱՆ



Ն Շ Խ Ա Ր Ն Ե Ր

... Որ եւ է ոմ իւրացնելու մեր ընդունակութիւնը շատ անգամ խաթարած է մեր ստեղծագործելու ոգին. ուստի՝ մենք պիտի դատապարտենք իւրացումի այս դիւրութիւնը ցեղի մը հաւար, որ այլ եւս հասած է փաղափայլութեան որոշ մակարդակի մը. այլապէս մենք վրայ կուտանք ոչ միայն հայ լեզուի տոնիքի գրողներ, այլ եւ ցեղային նկարագրին անընդարարի ամբողջականութիւնը:

Դ. ՎԱՐՈՒԺԱՆ



Հէ՛յ ագահ մարդ, հէ՛յ ագահ մարդ, միտքդ երկաթ կեանքդ կարն, ֆանի՛ ֆանիսն անցան քեզ պէս, ֆեզնից առաջ, քն առաջ. Ի՞նչ եմ տարել նքրանք կեանքից, քէ ինչ տանես դու քեզ հետ, խաղաղ անցիր, ուրախ անցիր երկու օրուան էս փախէդ:

ՅՈՎՀ. ԹՈՒՄԱՆԵԱՆ